

ԽԱՐԱՐՈՒՄԵՆ

ՓԼԱՏԵՐ, ԹՎԵՐ, ԴԵՊՔԵՐ...

Հունաստանում մի պարմանալի գետ կա: Դա Ավար գետն է: Այն վեց ժամ հոսում է դեպի ծով, վեց ժամ՝ ետ, այսինքն 24 ժամվա ընթացքում գետը չորս անգամ փոխում է իր ուղղությունը: Գիտնականները գետի այդ «քմահաճույքը» բացատրում են Էգեյան ծովի՝ մակընթացության և տեղատվության հետևանքով առաջացող մակարդակի տատանումներով:



Երբ մարդ ծափահարում է ուժգին, նրա մարմնից անջատվում է $\frac{1}{6}$, և նույնիսկ $\frac{1}{4}$ անգամ ավելի ջերմություն: 3500 տեղանոց հանդիսասարահը հաջող ներկայացման կամ համերգի ժամանակ առաջացնում է լրացուցիչ ջերմություն, որը ձմեռային մեկ օրվա ընթացքում բավական է վեց բնակարանանոց 20 տուն տաքացնելու համար:



Ավստրալիայի հյուսիսային մասում, Ռոբինսոն գետի ավազանում բնակվում է կոկորդիլոսների քիչ ուսումնասիրված մի տարատեսակ, որ բնիկների հետ ապրում է «հաշտ ու խաղաղ»: Բնիկները հանգիստ լողանում են գետում, իսկ չարածճի եղջիւնները նույնիսկ բարձրանում են այդ կենդանիների մեջքին: Եվ չի եղել մի դեպք, որ կոկորդիլոսներն ագրեսիվություն ցուցաբերեն: Դա, հավանաբար, բացատրվում է նրանով, որ շրջակայքում ոչ միայն կոկորդիլոս չեն որսում, այլև նրանց կերակրում են կրիայով ու մանր որսով:



Համաշխարհային օվկիանոսում լուրաքանչյուր մեկ խորանարդ մետր ջրի մեջ պարունակվում է 0,008 մկգ ոսկի:



Մի անգամ ԱՄՆ-ի ամենագեր մարդը, Վիլյամ Բրուկսը, որը կշռում է 245 կգ, հարբած վիճակում ընկել էր Միչիգան լիճը: Որպեսզի աղետի ենթարկվածին լճից դուրս բաշեն, ոստիկանները ստիպված էին տրակտոր բերել: Երախտագիտությամբ լցված փրկված հաստիկը ձեռք բերեց այդ տրակտորը, իսկ հետո այն նվիրեց ոստիկանությանը՝ «խեղդվողներին փրկելու համար»:





Մովազուց Մալիշկան, որն ապրում է Լենինգրադի կենդանաբանական այգում, երևի ամբողջ աշխարհի ծովացուներից «ամենահարուստն է»: Ռենտգենյան հետազոտման ժամանակ, նրա ստամոքսում հայտնաբերվեց մեկ կիլոգրամից ավելի մանրադրամ: Ցավոք, Մալիշկան միակ «դրամագետը» չէ: Կենդանաբանական այգու բնակիչներից մանջուրական արագիլը կուլ էր տվել 27 հաս մանրադրամ: Բայց դա տխուր վախճան ունեցավ: Թռչունը սատկեց պղնձի թունավորումից:



Տարբեր երկրների նավաստիներ իրենց սիրած ու չսիրած օրերն ունեն: Իսպանացիներն ամենաերջանիկ օրը համարում են հինգշաբթին: Հենց հինգշաբթի օրն է իր նշանավոր նավարկությունը սկսել Քրիստափոր Կոլումբոսը: Անգլիացիներն ու Ֆրանսիացիները, ընդհակառակը, հինգշաբթի օրվանից վախենում են այնպես, ինչպես չեն սիրում վետրվարի 2-ը, դեկտեմբերի 31-ը, ապրիլի առաջին երկուշաբթին և օգոստոսի երկրորդ երկուշաբթին: Այդ օրերը համընկնում են Անգլիայի և Ֆրանսիայի նավերին վրա հասած բազմաթիվ խոշոր նավաբեկությունների օրերի հետ:



Աշխարհի գրեթե բոլոր նավաստիները համոզված են, որ երկուշաբթի օրը ծով դուրս գալը հավասարազոր է ինքնախորտակման: Նավապետները, կապիտաններն ու մեխանիկները տարբեր առիթներով հետաձգում են նավարկությունը, ջանալով խարիսխը բարձրացնել երեքշաբթի 0 ժամ, 01 րոպեին: Լեգենդ է շրջում Մանդի (անգլերեն՝ երկուշաբթի) անվամբ կապիտանի մասին, որը փորձել է այդ սնահավատությանը վերջ տալ: Նավի վրա նա ծառայության է անցել երկուշաբթի, նավը ջուրն է իջեցրել երկուշաբթի, նավաստիներ է վարձել երկուշաբթի, նավարկության է ելել երկուշաբթի և աղետի ենթարկվել... երկուշաբթի:



Լոնդոնի օպերայի բուֆետայանն իր բազմամյա աշխատանքի ընթացքում ուսումնասիրել է, թե ինչպիսի սննդամթերք է ավելի հաճույքով հասարակությունն օգտագործում այս կամ այն կոմպոզիտորի համերգից հետո: Հետաքրքրական է, որ ամենից շատ սպիրտային խմիչք գնում են Ա. Շենբերգի դրոգեկաֆոնյան ստեղծագործությունները լսելուց հետո:




Հարավային հեռու ծածկված է երեք կիլոմետրանոց սառույցի շերտով: Այդ երակացությանն են հանգել սովետական գիտնականները, Անտարկտիդայում անցկացրած հետազոտություններից հետո: Այդ տվյալը մի ամբողջ կիլոմետրով գերազանցում է ամերիկյան գիտնականների տվյալները: Ինչպես ենթադրում են, նրանց սխալն այն էր, որ նրանք չեն կարողացել երկրի մակերևույթի սառույցի տակ անդրադարձած ալիքները տարբերել այլ արգելքներից:



Կարո՞ղ է պատահել, որ ծիծաղն աճի ճյուղերի վրա: Մերձավոր Արևելքում կան բույսեր, որոնց անվանում են «ծիծաղի ծաղիկներ»: Այդ ծաղիկների պտուղները սիսեռի մեծության հատիկներ են, որոնք մարդու մոտ առաջացնում են ծիծաղի բավական երկար նուպա (30—50 րոպե): Բնակիչներն այդ հատիկները ծամում են ատամի ցավը հանգստացնելու համար:



Անգլիական մի քանի կոմսությունների իշխանություններ վերջերս որոշում ընդունեցին, որ այն կովերը, որոնք ավտոխճուղով ընթանում են մթնշաղին, պետք է առջևից ունենան սպիտակ, իսկ հետևից կարմիր լապտեր: Հետաքրքիրն այն է, որ այդ որոշումն ընդունվել է ավտովարորդների պահանջով: Վերջերս հաճախակի էին դարձել ավտովարորդների ու եղջերավոր «հետիոտների» ընդհարումները, որոնց ժամանակ երբեմն տուժում էին մեքենաները:



Ամեն տարի Երկրի բույսերը մոտավորապես 150 միլիարդ տոննա ածխածին կապակցում են 25 միլիարդ տոննա ջրածնի հետ և արտադրում են մոտավորապես 400 միլիարդ տոննա ածխաջրածին: Բչերը գիտեն, որ այդ վիթխարի քիմիական գործարանի արտադրանքի 90 տոկոսը ստեղծվում է օվկիանոսային միկրոուկայիկ ջրիմուռներից, որոնցից միայն 10 տոկոսն է մեկ հալտնի:



Պատկերացնո՞ւմ եք, պտուղը պոկում են ծառից, բերում տուն, դնում սովազալի մեջ ու վառում մոմի փոխարեն: Պտուղն այրվում է հավասար լույսով:

Այդպիսի պտուղ-մոմեր կարելի է տեսնել Պանամայի պարանոցում, որտեղ բարձր «մոմային ծառերի» ամբողջ ծառուղիներ են աճում: Բնիկներն այդ վարմանալի պտուղներից օգտվում են բնակարանները լուսավորելու համար: Բուսական մոմերը պարունակում են 60 տոկոս ճարպ: Նրանց այրման տևողությունը գրեթե նույնն է ինչ և ստեարինի մոմերինը:



Փարիզի նշանավոր Էյֆելյան աշտարակն ամռանը 17 սանտիմետր երկար է քան ձմռանը:



Շվեդացի բահանա Ջոն Էնգվալն իր տանը ստեղծել է կոճակների թանգարան: Այստեղ հավաքված են աշխարհի ամենաբազմազան կոճակներ, թվով 125 հազար հատ: Թանգարանում ներկայացված է կոճակների ամբողջ պատմությունը՝ սկսած ամենահներից մինչև ամենանորերը: Զբոսաշրջիկները սիրով նն հաճախում այդ թանգարանը:



Լուսնի վրա 24 ժամվա ընթացքում ջերմաստիճանի տարբերությունն այնպիսին է, որ նրա բնակիչները, (եթե նրանք գոյություն ունենային), կարող էին ցերեկը լողանալ հալված ձնումքի մեջ (+129,5°), իսկ գիշերը չնուշկներով սահել սառած սպիրտի վրայով (—127,5°:



Ալժիրում, Սիդի-բել-Աբաս փոքրիկ բաղաբի մոտ, գտնվում է թանաքի մի լիճ: Այդ լճի մեջ թափվում են երկու գետակ, որոնցից մեկի ջրերը հագեցված են երկաթի աղերով, իսկ մյուսինը, որն անցնում է տորֆային ճահիճներով, իրենց մեջ պարունակում են այնպիսի նյութեր, ինչպիսիք կան թանաքի զբխտորի հյութի մեջ: (Թանաքի գխտորները մի քանի բույսերի, ինչպես օրինակ, կաղնու տերևների վրա աճող հիվանդագին պալարներ են, որոնք պարունակում են դաբաղանյութեր): Այդ ջրերի խառնուրդից առաջանում է թանաք: Լճի ջրում ոչ մի կենդանի չկա, ջուրը պիտանի է միայն գրելու համար:



Սահարա անապատում ապրող անասնապահական տուարեզ ցեղի տղամարդիկ չաղրա են կրում, իսկ կանայք շրջում են բաց դեմքերով:



Երեք րոպեում արևն այնքան էներգիա է տալիս, որքան մեկ տարվա ընթացքում՝ ծախսում է երկիրը:

● ՓՈՐՐԻԿ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

× Ուրախագի կուլեկցիայի բիրեոները շգունաբափվեն և չկորցնեն իրենց գեղեցիկ երանգները, արկղիկը ծածկե՛ք միմիայն դեղին ապակիով:

× Յուզաներկի բանկաները խորհուրդ է տրվում միշտ ամուր փակել: Այլապես բանկայի մեջ օդ է քափանցում,

և ներկի վրա քաղանք է առաջանում: Բայց որքան էլ բանկան կիպ փակե՛ք, միևնույն է անցքեր մնում են: Դրանից խուսափելու համար փակ բանկան մի վայրկյան շրջե՛ք: Անցքերը կլցվեն ներկով և օդն այլևս վտանգ չի ներկայացնի բանկայի պարունակությանը: